



ԵՐԱՊՈՒՇԱՔԹԻ, 10 ՅՈՒՆԻՍԿՐ, 2022

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւնն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՐՄՈՍ 34

ԳՈՂՈՒԹԻԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Անդադար Տէրը պիտի օրհնաբանեմ.  
անոր օրհներգութիւնը շրթներուս վրայ պիտի ըլլայ շարունակ:  
Տէրն է միակ պարծանքս.  
Ես Տիրոջ դիմեցի, եւ աղօթքիս պատասխանեց,  
վիս ազատեց բոլոր վախերէս:  
Տիրոջ մօտեցէք, որպէսզի ուրախութեամբ ճառագայթէք,  
եւ յուսախաբ չէք ըլլար բնաւ:  
Ճաշակեցէք, եւ տեսէք՝ թէ ինչքան քաղցր է Տէրը.  
Երանի անոր՝ որ Տիրոջ կ'ապաւինի:  
Հզօրագոյն մարդիկն իսկ կարօտութեան  
եւ անօթութեան կրնան մատնուիլ,  
սակայն Տիրոջ դիմողները բանի մը կարօտ պիտի չմնան:  
Եկէք, որդեակներ, մտիկ ըրէք ինձի,  
եւ ես ձեզի սորվեցնեմ՝ թէ ինչ է Տիրոջ վախը:  
Կ'ուզե՞ս երկար կեանք ունենալ,  
կ'ուզես բարօր օրեր տեսնել.  
Լեզուդ չարախօսութեան մի ծառայեցներ,  
շրթներդ բնաւ թող նենգութիւն չխօսին:  
Հեռու մնա չարիքէն, եւ բարիք ըրէ,  
խաղաղութիւն կամեցիր եւ վայն հեղապանդ:  
Տիրոջ աչքերը արդարներուն վրայ կը հսկեն,  
սկանջները միշտ պատրաստ են անոնց աղաչանքը լսելու:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատարբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԹԹԸ



## ԱՌԱԿԱՑ 22 ԳԼՈՒԽ

### ԻՍՎԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԹԱՄՏՈՒԹԻՒՆ 22:1-16

Հեղափոխական նախադասությամբ կը սկսի 22րդ գլուխը, եւ կ'ըսէ. «Բարի անունը շար հարստութենէն աւելի ընփոխ է, ու շնորհքը արծաթէն ու ոսկիէն աղէկ է» 1 հմբ: Այսօր երբ կը ծնինք, իւրաքանչիւրին անուն մը կը տրուի: Շարքեր այդ տրուած անունով գոհ են, շարքեր կ'ուզեն փոխել: Բայց աւելի հեղափոխական բաժինը այն է, որ ամէն մէկը կ'ուզէ այդ անունը այս կամ այն ձեով պահել, յաւերժացնել, արձանագրել փայլով տարբեր տեղերու վրայ: Յաճախ երբ անուն մը կը տրուի, նաեւ տուեալ անձին կ'ըսենք. «Անունին տերը եղիք», այսինքն այնպիսի անուն մը տրուած է, որ այդ անունը լաւ պահէ: Ահա նոյն հասկացողությամբ նաեւ Առակաց գիրքը կու գայ եւ կը յիշեցնէ այս անգամ անունի մասին, որ սակայն ոչ յարուկ անուն մը, այլ անուն մը որ գայն յիշեն մարդիկ բարիով, եւ այդ բարի անուանումը կու գայ Աստուծոյ կողմէ տրուած շնորհքէն: Անուն մը, որ շար աւելի արժէ քան որեւէ մէկ հարստութիւն, որովհետեւ այդ հարստությամբ կարելի չէ ձեռք բերել այդպիսի անուն մը: Անուն մը որ շար աւելի է քան ոսկին ու արծաթը: Անուն մը, որ պիտի տրուի, այնպէս ինչպէս կը յիշուի Յայտնութիւն Յովհաննոս գիրքին մէջ, նոր անուն մը, քրիստոնէայ անունը, Քրիստոսով տրուելիք նոր անուն մը, նորոգուած իր նկարագրային գիշերով, նոր մարդը, իր առաքինությամբ:

2րդ համարը յիշեցում է, որ մարդկային կեանքի դրուածքին մէջ, դասակարգումներու տարբերութիւններ ալ կան եթէ, բայց եւ այնպէս բոլորին ստեղծիչը Աստուծոյ ինքն է, Տէրը բոլորին: Հարուստ թէ աղքատ, քաղաքացի կամ գիւղացի, թէկուզ գոյներու տարբերութիւն, բոլորի Տէրը Աստուծոյ Ինքն է: Նոյնը միտքը պիտի արտայայտէ Պողոս Առաքեալ ըսելով. «Չիք խտրութիւն, ոչ հարուստի ոչ ալ աղքատի» Գաղաթ.:

Ահա թէ ինչու Քրիստոս երբ Իր աշակերտները պիտի դրկէր քարոզչութեան, հետեւեալ պատուէրը տուաւ ըսելով. «աղանիներու նման միամիտ եղէք եւ օձերու նման խորագէտ»», ուրպէսզի, «չախքը տեսնելով զգուշանաք», այլապէս կրնաք վնասուիլ 3րդ համար: Խորագիտութիւնը, խորքը թափանցելու, շրջահայեաց ըլլալու, յաճախ նաեւ չարիքէն հեռու փախչելու, որպէսզի չվնասուի: Այս բոլորի համար իմաստութիւն է պէտք, իսկ եթէ չունինք այդ իմաստութիւնը, ընդհակառակը կրնանք վնասուիլ: Անհրաժեշտ է ուրեմն խնդրել այդ իմաստութիւնը, որպէսզի ըստ այնմ բարին, խորհելու, խօսելու եւ գործելու:

4րդ համարը կը ներկայացնէ արդիւնքը, հետեւանքը խոնարհութեան եւ Տիրոջ երկիւղը ունենալու, հարստութիւն է, փառք է ու կեանք է: Այս բոլորը ոչ աշխարհիկ չափանիշներով, որովհետեւ նոյնին աշխարհիկ չափանիշն ալ կայ, հարստութիւն, փառք եւ կեանք: Որովհետեւ ի վերջոյ կ'ուզենք ամէն ինչին արդիւնքը տեսնել կամ իմանալ եւ անոր օգտակարութիւնը գիտնալ:

5րդ համարը մէկ այլ զգուշացում է, հեռու մնալու այս անգամ այնպիսի մարդոցմէ, որոնց ճամբան ծուռ է, ծռած: Ծուռ ճամբան, արտայայտութեան եղանակ մըն է, որ ըսել կ'ուզէ, զարտուղի, խաբէբայութեամբ, որոնց մէջ փուշեր ու որոգայթներ կան, այսինքն՝ վնասակար: Եթէ կ'ուզեն իմ հոգիս պահել, ուրեմն պէտք է այդպիսիներէն հեռու մնալ:

«Կրթէ մանուկը իր ճաբան սկսած արեւը, որպէսզի իր ծերութեան արեւն ալ անկէ չխտորի» 6րդ համար: Տարբեր տարբեր առիթներով լսած ենք, այս խօսքը, բայց այսօրուան աշխարհը այդ իմաստով չէ հեղափոխուած, ընդհանրապէս նաեւ ունի իր փիլիսոփայութիւնը, դիպելու եղանակը, ու դաստիարակելու արժէջափը: Այսօր աշխարհը ինք իր իմաստած ձեով կ'ուզէ դաստիարակել մանուկները, ընդհանրապէս Աստուծոյ հեռու, առանց Աստուծոյ երկիւղին: Իւրաքանչիւր երեխայի մէջ տեսնելու կարողութիւնը եւ իւրայարկութիւնը եւ ըստ այնմ դաստիարակելու: Դաստիարակելու Աստուծոյ ճամբուն մէջ ըլլալու: Այս բոլորի արդիւնքը կ'ըլլայ այն, որ ի ծերութեան արեւն չխտորի, ոչ թէ չի կրնար խտորիլ, կրնայ պահ մը հեռանալ, այս կամ այն պատճառով, ինչպէս անառակ որդիի պարագային, բայց յետոյ ետ վերադառնալու խոստում մը կայ:

7րդ համարը դրուածքն է այս կեանքին, որուն սակայն այսօր յիշեցումը հրաւեր կոչ է ապրելու մեր կեանքը անպէս մը որ որեւէ մէկուն պարտական չըլլալու, այլապէս հարուստը աղքատին վրայ տիրողն է, մանաւանդ երբ ան ալ դրամ փոխ տուած, ուրեմն անոր ծառան, մոռնալով, այն իրողութիւնը, որ վերը յիշեցուց ըսելով. «հարուստն ու աղքատը իրարու կը հանդիպին, երկուքի ստեղծողը Աստուծոյ Ինքն է»:

«Չարութիւնը ցանողը ունայնութիւն կը հնձէ» 8րդ համար: Մէկ այլ տարբերակը այն խօսքին որ կ'ըսէ. «Ի՛նչ որ ցանես պիտի հնձես», ուշ կամ կանուխ: Յաճախ սերմեր կան, որոնք ուշ իրենց պտուղը կու տան, բայց անխուսափելի, անպայման պտուղ պիտի տան: Նոյնպէս ալ նայած ինչ սերմեր կը ցանենք մեր շուրջ, երթէ բարութեան սերմեր են, ըստ այնմ, այս պարագային չութեան սերմեր, որոնց դիմաց ունայնութիւն պիտի հնձուի, եւ պաշտպանութիւն պիտի չունենայ, այն գաւազանը որ զինք պիտի պաշտպանէր, պիտի կորսուի:

9րդ համարը Քրիստոսի մէկ խօսքը յիշեցնող համար է. «Եթէ աչքդ առողջ է, դուն առողջ ես», առաւել օրհնեալ ես, առաւել այդ օրհնութենէն ալ աղքատին բաժին ալ կու տաս: Եթէ կ'ուզենք, որ կռիւր անցնի, վեճն ու անարգանքը դադարին, պէտք է հեռացնել ծաղրողը 10րդ համար: Անկէ կախում ունին այս բոլորը: 11րդ համարը Քրիստոսի մէկ այլ խօսքը յիշեցնող, «Երանի սրտով մաքրութեան, որովհետեւ անոնք զԱստուծոյ պիտի տեսնեն»: Իսկ բերանը սրտին աւելորդացն է որ դուրս կու տայ: Ուրեմն սրտի մաքրութիւնը սիրողը շրթունքներուն վրայ շնորհք կայ: Առաւել եւս այդ անձը բարեկամը կը դառնայ Թագաւորին:

12րդ համարը յիշեցում մըն է, թէ ինչպէս Տէրը կը պահէ ան որ իմաստութեամբ կ'ապրի իր կեանքը, բայց անօրէնին նկատմամբ իր խօսքերովը պիտի դատէ: 13րդ համարը ծոյլին վիճակը ներկայացնող համարն մըն է, որ ծոյլը ամէն տեսակի պարճառաբանութիւն կ'ընէ, մինչեւ իսկ ըսելու, թէ դուրսը առի՞ծ կայ: 14րդ համարը մէկ այլ զգուշացում այնպիսի կ'իններէն, որոնք իրենք բառերով ու խօսքերով կը դառնան թակարդ, եւ այնպիսի թակարդ որուն մէջ ինկողը դժուար թէ կարենայ դուրս գալ, առաւել եւս, Տիրոջ իմաստութիւնն ու երկիւղը չունեցող ատելի դիւրին կրնայ անոր մէջ իյնալ:

Յստակ է Աստուծոյ խօսքը, երբ առիթով մը պիտի ըսէր. «Մարդուն սրտին խորհուրդը իր ծնունդէն չար է» Ծննդոց 8.21 հմմտ 15րդ համար: Սա կը նշանակէ, որ երբ կը ծնինք անմեղ չենք ծնիր, ինչպէս պիտի ըսէ նաեւ Ռաիթ մարգարէն, անօրէնութեամբ զիս յղացաւ մայր իմ: Ուրեմն անպայմանօրէն մեր սրտին մէջ չար խորհուրդներ կան, բայց երբ խրատի գաւազան միշտ ներկայ է, ապա այն արեւն այդ չար խորհուրդներէ կրնայ մեզմէ հեռացնել, այլապէս այդ խորհուրդները հոն են, կը սպասեն առիթի, որպէսզի գործնականանան:

Ի վերջոյ, մէկ այլ յիշեցում եւս, անոնց որոնք կը փորձեն ուրիշը հարստահարելով, աղքատին գրկանք ընելով, իրենց ստացուածքը շարցնելու, այդպիսիները կարօտի պիտի մատնուին: Մի գուցէ այս երկրաւոր կեանքի ընթացքին ապրին որպէս բարօր կեանք, աւարտին, սակայն, ինչպիսին ըլլայ իրենց վիճակը, յիշենք Քրիստոսի պարմած մեծահարուտրին եւ աղքատ Ղազարոսին առակը:

**Պահապան ամենայնի Քրիստոս,**  
*աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,*  
*ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,*  
*ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.*  
*եւ ողորմեա՛ք քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*